

ՏԵՐԱՅԻ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԱՑ ԲՐՅՈՒՍԵԼԻ
ԱՐՔԱՅԱԿԱՆ ԳՐԱՏԱՆ

ԲՐՅՈՒՍԵԼԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՊՐԱՄԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՃԵՌԱԳՐԵՐԻ ՄՈՒՆ ՅՈՒԳԱԿՐ, որի
ինքնագիր օրինակը պահպում է Մաշտոցի անվան Մատենադարանի Անհա-
տական արխիվների ֆոնդում (թղթապանակ № 123, վավերափիր № 1ա), Տի-
րայր Տեր-Հովհաննիսյանը կազմել է զեռ 1909 թվականին, երբ շրջադարձում
էր Եվրոպայում:

Յուգակը բովանդակում է երեք ճեռագրերի նկարագրություն, որոնցից
առաջինը 1720-ին ընդօրինակված մի Ավետարան է՝ թուրքերեն զուգահեռ
թարգմանությամբ, երկրորդը՝ Երողերի «Արամեան լեզուի գանձ» աշխատու-
թյան հոլանդերեն թարգմանությունը՝ կատարված XVIII դարի կեսերին ան-
ծանոթ թարգմանչի կողմից, իսկ երրորդը՝ XVIII դարում կազմված Հայերեն-
լատիներեն եռահատոր մի բառարան:

Առաջին և երրորդ ճեռագրերը գիտական շրջանառության մեջ են մտել
Յ. Մակերի համաստ նկարագրությունը („Rapport sur une mission scien-
tifique en Belgique...”, Paris, 1924), իսկ երկրորդը՝ XVIII դարում կազմված Հայերեն-
լատիներեն եռահատոր մի բառարան:

Մուն յուգակը, որը հրապարակվում է որոշ կրթատումներով, միանդա-
մայն բավարար պատկերացում է տալիս նշված ճեռագրերի մասին:

Ա. Զեյրունյան

1

Ա. Ի Ե Տ Ա. Բ Ա. Ն

Ms. № 21701

ԹՁԿԹ—1720

Թերը՝ $3 + 291 + 3 = 297$: Մեծություն՝ 22×16 : Գրություն՝ երկայնուն,
15,5 \times 4,5: Տող՝ 35: Պակ՝ 25, յուրաքանչյուրը 12 թերթից, բացի ինչ-4: Վեր-
ջին կազմելու ժամանակ ԺԷ պրակը սխալմամբ զրված է եղած պրակների մի-
ջև: Եյուր՝ թուղթ, հաստ, կես ողորկած, դեղնավուն: Գիր՝ նոտրգիր, մանր, ոչ
կանոնավոր, սև թանաք, երբեմն թանաքի փոփոխություն: Կազմ՝ 23×16 ,
սովարաթուղթ, կաշեպատ, սև, նորագույն, ԺԵ դ.: Երկու կողերի երեսին
տաճկական պետական նշան: Ներսը գունավոր թղթով պատած: Մազար-
յա պահպանակ՝ շունի, միայն սկզբից և վերջից երկ-երկու թղթյա պահպա-

նակ: Հանգամանք՝ լավ. տեղ-տեղ փոքր նորոգություններ, բնագիրը նորոգված, վրան թղթեր կպցրած և նորից նույն զրշով գրած՝ 48ր, 54ա, 187ա, 257ա: Բժեր՝ 22, 31, 58ր, 59ա, 95ր, 96ա, 105ր, 160, 163, 170 (վերջին երեքը խոնավության հետքերով): Զնշված՝ 62ա, 131ա, շորս-շորս տող, վրան զծեր քաշած: Բնագրի պակասների հավելումներ՝ 12ր, 18ա, 23ա, 30ա, 38ա, 51, 56ա, 61ր, 64ր, 74ա, 75ա, 84ր, 86ա, 92, 109ա, 111ր, 113, 115ր, 117ա, 120ա, 121ր, 122ր, 129, 131ր, 138ա, 139ր, 149ա, 154ր, 157ա, 162ա, 172ա, 177ա, 178ա, 180ա, 185ա, 186ր, 189ր, 190ր, 191ր, 208ր, 269ա, 273ր, 274ա, 279ա, 290ր: Պակաս՝ 75ա: Կտրած և նոր թուղթ կպցրած, գրված նույն զրշությամբ՝ 74: Դատարկ՝ Iր, IIր, IIIր, 87ա, 138ր, 219ր, 291, I, II, III: Խորան կիսախորան, լուսանցազարդ, նկար՝ շունի: Զարդագիր՝ սկսվածքները թռչնագրեր, անարվեստ: 93-ից սկսած խոնավությունից թռչնագրերը չնշված և նոցա տեղը այլ գրշով, աև թանաքով, շատ անվարժ գրշի ձեռքով սովորական բոլորդիր գլխատառեր, անճաշակ: Սկսվածքները, վերնագրերը և տնագույն տառերը կարմրադեղ: Ժամանակ՝ ՌՃԿԹ (1720): Տեղ՝ անհայտ: Գրիչ, ծաղկող՝ Տեր Խաչատուր: Տեր՝ Արզման: Հիշատակարան՝ IIա, IIր, IIIա, 92ր, 290ր, Ա. կողի ներսը: Տեղեկություն՝ գնված 1860 թ. նոյեմբերի 5-ին vicomte Th. de Jonghe-ի գրատան վաճառման աճուրդի ժամանակ, 52 լր. 80 ս.: Կնքադրոշ՝ IIIա, 1ա, 2ա, 3ա, 6ա ևն, 290ր «Bibliothéque Royale»:

Մատյանս է Ավետարան, որի մեջ կան շորս Ավետարանները, դիմացը՝ տաճերեն թարգմանությամբ։ Ակիզը շունի եվսերի թուղթն առ Կարպիանոս։ առանց նախառության, զանկի, և բովանդակում է։

1. 1-ա «Մըրոյ Աւետարանիս Յիսուսի
Քրիստոսի [որ] ըստ Մատթէոսի:
Գլուխ առաջին—Գիրք ծննդեան Յի-
սուսի Քրիստոսի [որդոյ Դաւթի]
որուու Առահամու...»:

«Սուրբ Ավետարանը Յիսուս Քրիստոսուն Մատթէոսըն մինիպիննէ: Պաշիպիտա—Գիթապը միլլատ Եսուս էլ-Մէսիհ իրնի Դաւութ իրն իբրահիմ...»:

Ստորին լուսանցքներում չէ նշանակված Ավետարանների համատես աղյուսակը, այլ կողքի լուսանցքի վրա նշանակված են զլխահամարները՝ Ա-3ՇԴ և տաճկերեն՝ 1—354, սկզբանաբառվ։ 38ա Զունի «Ազգ շար և շնացող նշան խնդրէ...» (ԺԶ, 4); 75ա «Յայնժամ պատասխանի տացեն արդարքն երբ տեսաք», որից հետո հայ բնագիրը պակաս (ԻԵ, 37-ԻԶ, 3), տեղ բաց թողած, իսկ տաճկերեն թարգմանությունն ամբողջը:

2. 88ա «Աւետարան ըստ [Մարկոսի]—Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի որդույ Աստուծոյ: Որպէս և որեալ է...»:

«Ենեիլ» պայ Մարկոս—Իսահ
Մէսիհ իպնուլլահըն ինձիւըն էվէլին-
ճէ հազրմբշ տըր, փեղամպէրլէր
տէ...»:

137թ «Եւ ոչ ումեք զինչ ասէին, զի երկնչէին» բառերից հետո առանձին կարմրադեղ նշանով՝ «Յարուցեալ Յիսուս առաջօտուն... երթալին գհետ նոցա» (ԺԶ, 9-20):

3. 139ա «Աւետարան բառ Ղուկաս— պաշ. Ղուկաս սու—քանզի բազումք յօյժարեցան զլուխ—վէ շօքլար իիսթար էլլէտիվերըստին կարգել...»:

«Ղուկաս (դիմացը) պաշ. Ղուկաս սու—քանզի բազումք յօյժարեցան զլուխ—վէ շօքլար իիսթար էլլէտիվերըստին կարգել...»:

64ր (ԺԸ պրակը կազմելու ժամանակ սխալմամբ փոխադրված 60—72, փոխանակ լինելու 215-ից հետո) բնագրի մեջ շունի՞ ԻԲ, 43—44. այդ դրված է ստորին լուսանցքի մեջ. «Եւ երեցաւ նմա Հրեշտակ Հեղեալ յերկիր», նույն զրով: Տաճկերին թարգմանության մեջ այդ մասը չկա: 167ր.ից ոկտած վերի լուսանցքի մեջ չէ նշանակված Ավետարանի վերնագիրը մինչեւ վերջ՝ 219ա:

4. 220ա «[Աւետարան բառ] Յոն- հաննու—ի սկզբանէ էր բանն, և բանն Ա. պապ Յոնան—Քատիմդէն իսեի հաննու—ի սկզբանէ էր բանն, և բանն թէլիմէն, վէ թէլիմէ Ալահտէ իսեի...»:

Ա. պապ Յոնան—Քատիմդէն իսեի հաննու—ի սկզբանէ էր բանն, և բանն թէլիմէն, վէ թէլիմէ Ալահտէ իսեի...»:

233ր Ունի «Եւ Հրեշտակ Տեառն իջանէր...» տրմը, առանց որիէ նշանի: Նույնը տաճկերին թարգմանության մեջ (Ե, 4): 246ա Ունի «Իրք կնոշն շնացելոյ» առանց առանձին վերնագրի և բաժանման նշանի, բուն մարմնի մեջ. «Եւ գնացին իւրաքանչիր ոք ի տեղի իւր... մի մեղանչէր» (Է, 51-Ը, 11):

Հիշատակարան

1. 290ր Գլխավորը. «Աւարտումն զրքիս ԽՃԿԹ (1720), մարտի յամառք Ժ և Ա (11), ի վայելումն Արզմանին: Ընդ երկայն աւուրս պահեսցէ: Զեռամբ նախաց Տէր Խաչատուրի, ի ժամանակս Կարապետ արհեալիսկոպոսի Զէրունցի, էջմիածնա կաթողիկոսի Աստուածատուրի»:

2. IIIա Ալ զրիչ, նոտրդիր. «Յարակիրցի Տէր Սարգիս է յիշատակ»:

3. IIIա Ալ զրչով զանազան զրչություններ և 4 Evangélistes, traduits en Arménien et en Turc]. Sg. 10/3, 41*.

4. Ար «La note au bas de la page signifie souvenir du Révérend père Der Sarkis, originaire de la ville d'Arapguir (Turquie d'Asie). 25 janv. 1900». ներքեն ամելացրած «Թէլիմն»:

5. Ար Ամբողջ երեսի վրա մի ներտողաթյուն, զրիմած հայագետ Félix Nève-ի ձեռքով. «Vente de Jonghe, 52 fr. 80 c. XVIII s. Les quatre Evangiles en Arménien et en Turc. Maroquin noir au chiffre du sultan sur le plat. La souscription finale porte que ce livre a été achevé l'an 1169 (de l'ère arménienne), le 11 du mois de mars, correspondant à l'an 1720 de l'ère chrétienne. Il est de la main du calligraphe Katchadour du temps de l'archevêque Garabed (dit) Zetotzni. Asdwazadour étant catholico d'Echmiadzin», որ և նորինթյամբ տօպազրիում է „Catalogue des Livres et Manuscrits formant la Bibliothèque du feu M. J. B. Th. de Jonghe...”, Tome I, Bruxelles, 1860, p. 2.

6. 92ր Ստորին լուսանցքի մեջ նույն զրչի ձեռքով. «Ռակի էիթիրտիմ պոչ քեաղբար եազտրզը կիւն»:

7. Կազմի Ա. կողի ներսը մի Ex-libris. „Fortune ne vieillit pas“ գերատառթյամբ և ներքեց՝ „Bibliothèque de Th. de Jonghe“.

Զհապիրս համաստ նկարագրված է „Catalogue des Manuscrits de la Bibliothèque Royale de Belgique par J. van Den Gheyn, S. J.“, Tome I, p. 39, § 85 (21701), Bruxelles, 1901.

2

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒԻ

Ms. N 2593

ԺԷ—XVIII

Թերը՝ $2+143$ (կրկ. 124 և 125) + 2 = 147: Մեծուրյուն՝ $24,5 \times 18,5$: Գրուրյուն՝ միասյուն, $22 \times 12,5$: Տող՝ 48: Պրակ՝ պրակահամար շունի, ունի էջահամար՝ $4+1=291$ (կրկ. էջ 211, ուրեմն՝ 292) + 4: Նյուր՝ թուղթ, հաստ, անողորկ, դեղնավուն: Գիր՝ հայերեն մասը բոլորդիր, կանոնավոր, միջակ մեծությամբ: Կազմ՝ $25,2 \times 19$, ստվարաթուղթ, կաշեպատ, դեղին, գեղեցիկ կազմ, մեջը ուկեղարդ: Ներսը գունավոր թուղթ, կողերը կարմիր աղյուսագույն: Մագաղարյա պահպանակ՝ շունի, միայն սկզբից և վերջից երկ-երկու թղթյա պահպանակ: Հանգամանք՝ շատ լավ: Դատարկ՝ I, II, 291, I, IIա: Խորան, կիսախորան, լուսանցազարդ, նկար՝ շունի: Զարդագիր՝ ամբողջ այրութենք, ելքրոպական նոր արվեստի ոճով, մեծ մասամբ մարդագրեր, երբեմն նաև թոշնադիր և ձկնագիր: Ժամանակ՝ անհայտ, հավանորեն՝ ԺԷ դ. (1710-ից հետո): Տեղ, գրիչ, տեր՝ անհայտ: Հիշատակարան՝ շունի: Տեղեկուրյուն՝ զնված 1900 թ. հունիս 23-ին Shelterham գրատնից, որ վաճառված է հավանորեն (ինչպես ենթադրելի է Իա երեսի վրա զրվածից) Bayan's-ից £ 1,10: Մի ժամանակ եղել է Sir S. P. Middle Hill գրատան մեջ և կրել է № 999, հետո՝ № 2273: Կերպարշմ՝ Առ, 1ա, 145ր, լու. „Bibliothèque Royale de Belgique“.

Մատլանս է „Het eerste Boek der Spraakkunst van de Armeensche Taal“, ինչպես երեսմ է 1ա վերնագրից, զրված հոլանդերեն, իրահ Քերականուրյուն հայոց լեզվի, որի հեղինակն անծանոթ է ըստ մատենիս, սակայն Joh. Joachimi Schröder-ի «Արամեան լիգուին Դանձ»-ի բառցի թարգմանությունն է, և բովանդակում է.

ա. 1ա „Het eerste Boek der Spraakkunst van de Armeensche Taal na de Letter van de Orthographie of Spelling. Eerste Hoofdstuk. Van de Letteren...“.

Կից հայ այրութենի զանազան ձևերը. նույնը, ինչ որ Շրուգերի «Դանձ»-ի մեջ (անդ, էջ 1—4): Չէ թարգմանված սրան նախորդող „Dedicatio“, „Praefatio“, „Dissertatio“ բաժինը (անդ, A, B, C, էջ 1—64):

բ. 3ա „Van de Letteren“ վերնագրի տակ հայ տառերի զանազան անուների բացատրություններ, ինչպես. „De eerste is Groote—ծաղկացիր....,

De Sweede—Երկաթագիր..., De Derde is—բոլորպիր..., De Vierde is—նուրբրգիր....: *Տե՛ս «Գանձ», էջ 5:*

զ. Յր „Sweede Hoofdstuk. Van den kragt der Letteren...“. *Տառերի հնչման մասին: Տե՛ս «Գանձ», էջ 6—17:*

դ. 10ա Երկրաբառների, բաղաձայն ու ձայնավոր տառերի մասին: 12ա վանկերի կազմություն: 13ա Բառերի կազմություն: 13բ Կետադրություն: 15ա Շեշտադրություն: *Տե՛ս «Գանձ», էջ 18—28:*

ե. 16բ «Van de Verkorting»: Առաջ են բերված կրճատումների սովորական օրինակներ. «Ած, տծ—շատուած... Քրզ»: *Տե՛ս «Գանձ», էջ 28—32:*

զ. 18ա Մի հատված Մովսես Խորենացվո «Պատմութիւն Հայոց»-ից. «Դիմումն ի մեզ Պոմպէի Հոռվմայեցոց զօրավարի և առնուլ զԵաժաք... աւետիր մահուան Միհրդատայ» (Գիրք Բ, ԺԵ), տառադարձված եվրոպական տառերով. թարգմանությունը՝ 19բ: *Տե՛ս «Գանձ», էջ 32—35:*

կ. 20ա „Algemeene Regelen. Siende Hoofdstuk. Van de Verandering en uyt lating der klinkers. Algemeene Regelen...“. *Զայնավորների հնչման կանոնները և օրինակները, որով և վերջանում է առաջին դիրքը: Տե՛ս «Գանձ», էջ 35—40:*

ը. 23ա Ակուխոմ է բան քերականոթյունը. „Letterlyke Spraakkonst van de Armeensche Taal. Sweede Boek. Van de Naam...“. *Բաժանուած զանազան պլոխների. 23բ—30ա §§ 2—7 բառերի, ածականների, անոնների տեսակների, ածականների, թվի են մասին: 30ա § 8 „Achtste Hoofdstuk. Van de Naan val...“. Հոլովների մասին: Տե՛ս «Գանձ», էջ 41—86:*

թ. 41բ „Elfte Hoofdstuk. Van de Getal Naam Woorden...“. *Թվական անոնների հոլովոմների օրինակները: Տե՛ս «Գանձ», էջ 86—91:*

ժ. 43բ „Zwaalfde Hoodstuk. Van de Voornaam Woorden...“. *Դերանունների հոլովման զանազան օրինակները՝ §§ I—VIII, որով վերջանում է երկրորդ դիրքը: Տե՛ս «Գանձ», էջ 91—99:*

ծա. 47ա „Het der de Boek de Letter lyke Spraakkonst der Armeensche Taal. Van het Werk Woord. Eerste Hoofdstuk...“. *Բայերի մասին, խոնարհումների զանազան օրինակները: 70ա Կրամորական բայեր: 74ա Օժանդակ բայեր: 75բ Անգեմ բայեր, որով վերջանում է երրորդ դիրքը՝ 77ա: Տե՛ս «Գանձ», էջ 100—161:*

դբ. 77բ „Vier de Boek. Van de Armeensche Letter lyke Spraakkonst“. *Մասամբների, չողկապների, նախողրոթյունների, միջարկոթյունների մասին: Տե՛ս «Գանձ», էջ 162—177,*

զզ. 87ա Ակուխոմ է քերականոթյուն երկրորդ մասը՝ Համաձայնոթյուն. „Letter lyke Spraakkonst van de Armeensche Taal. Vyf. e Boek. Van de Woordschiking. Eerste Hoofdstuk. Van de overeenkomst des naam woords met her Naam Woord...“, 107բ. «Աերջ քերականոթեանս. Eynde van Get Vyfde Boek». *Տե՛ս «Գանձ», էջ 178—220:*

«Գանձ»-ի հետեւ զլոխը „Prosodia Armenica, sive, artis metricae et musicae elementa“ (էջ 221—298) չէ թարգմանված մատենիս մեջ:

դդ. 108 „Voordeeden van het kort begrip der Geedendaagsche Armensche Burgerlyke Taal...“.

Այս և հետեւյալ զլուխը նվիրված է ժամանակի աշխարհաբարի քերականության և լեզվի կազմության: Նախարարն չէ վերջացրած: 110ր „.. idien die uw betrageen. Vaar wel...“.
Մնացածը թերի, որի համար համարյա մի ամրող էշ բաց տեղ թողած: Տե՛ս «Գանձ», էշ 299—302:

Ճ. 110ր „Kort begrip der burgerlyke Spraak van de Armeniers. Eerste Hoofdstuk van de Letterbeschryving...“. ՀԱՅԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ մասին զանազան գալառների մեջ: Վերջանում է 120ր „De overige zal de oeffening Geeven, waar in de Volgen de Zaamenspraaken den Lezer die zig op de Arm. burgerl. spraak beolytigen zullen in beyden“. Տե՛ս «Գանձ», էշ 303—324:

Փզ. 120ր Մի զրոցատրական բաժին, աշխարհաբար, դիմացը Հոլանդերներին թարգմանությամբ: Վերջը՝ 143ր «Տիրատուր». Տեղէս շուրի վանքն երկու սահմանապարհ այս, որի շարունակությունը, ինչպես նկատողություն է արած հետեւյալ էշի վրա, „The last lie is bound in wrong, after p. 261“, դանվում է 129ր «...պիտի ծարաւ զնանք ...վանքոց մեզնից շատ բարեւ», որով և վերջանում է մատյանս: Տե՛ս «Գանձ», էշ 325—370, որի 367 էշի պարսկերն երկու տող զրությունը ձեռագրիս մեջ չկա. տեղը դատարկ, դիմացը՝ պարսկերնի թարգմանությունը:

Զեռագիրս շունի «Գանձ»-ի հաջորդ զլուխները՝ էշ 371—490:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Չունի: Թվական անունների Հոլովման օրինակների մեջ հառաջ է բերված նաև «ԾՃԾԾ» (1710). «...Յամի Տիառն հազար հօթն հարիւր և տասներորդ», որ հավանորեն Շրոդերի «Գանձ»-ի զրության թվականն է, որովհետեւ 1711-ին զիրքն արդեն տպված էր, որ շատ հետո, երեխ, թարգմանված է նաև մատյանս (տե՛ս անդ, էշ 88):

3

Բ Ա Ռ Ա Բ Ա Ն

Ms. N^o 21882, 21883, 21884

ԺԷ—XVIII

Թերը—Ա. Հատոր՝ 4+437 (կրկ. 56 և 59), Բ Հատոր՝ 2+535 (կրկ. 380 և 470), Գ Հատոր՝ 2+456 (կրկ. 192 և 302): Մեծություն՝ 36×23,5, Գրություն՝ միասյուն, 29×15, երեսն ավելի կամ պակաս: Տող՝ 3—39: Պրակ՝ պրակամար շունեն (Ա. Հատորն ունի 1—54 թերթահամար, այնուհետեւ չէ նշանակված, ինչպես և մյուս հատորները): Նյուր՝ թուղթ, հաստ, անողորկ, կոշտ, սպիտակ: Գիր՝ տեղ-տեղ նոտրդիր, մեծ մասը շղագիր, եվրոպական գրչի զրու-

թյամբ, անկանոն, պարզ կազմ՝ 3 հատորն ևս $36,2 \times 24,2$, ստվարաթուղթ, ամուր, կաշեպատ, դեղին, եվրոպական գեղեցիկ կազմ, ժի դ., եղերքները և մեջքը մանր զարդերով: Մեջքի վրա ոսկե տառերով անունը և հատորի համարը: Ներսը գունավոր թղթով պատած: Մագաղաքյա պահպանակ՝ չունի: Հանգամանք՝ լավ: Մեջք բազմաթիվ նոր թերթեր ավելացրած և նույն գրչով այլ հավելումներ արած: Թերթերի վրա երթևմն մանրիկ թղթիկներ կացրած՝ մի կամ մի քանի բառերի հավելումներով, նույն գրչով: Շատ տեղեր բաց թողած՝ բնագրի մեջ նոր բառեր ավելացնելու համար: Դատարկ՝ բազմաթիվ, դիտավորությամբ թողած՝ հավելումների համար: Խորան, կիսախորան չունի: Չարդագիր՝ չունի: Սկզբնատառերը շատ սովորական նոտրգիր գլխատաներ, դեղնավուն թանաքով, որ տեղ-տեղ ծծված է և անցած մյուս երեսը: Բազմաթիվ հավելումներ ու թանաքով բնագրի մեջ և լուսանցքների վրա: Ժամանակ՝ անհայտ, հավանութեն ժիշտերին: Տեղ, գրիշ, աեր՝ անհայտ: Հիշատակարան՝ Ա հատոր I, IIIա: Տեղեկություն՝ գնված 1863 թ. մայիս և հոկտեմբեր ամիսներին Van Alstein-ի գրատան վաճառումի աճուրդի ժամանակ (1863 թ., մայիս 30), Գան (Gand), 261ր. 40c. երեք հատորը (տե՛ս Հիշատակարանը): Կնքադրոշմ՝ չունի:

Մատյանս է Բառարան Հայերեն-լատիներեն, երեք հատորի մեջ՝ I—III, որի հեղինակն անծանոթ է, և բովանդակում է.

1. Հատոր առաջին. 1ր «Արքայ. յի—մեծ Հայր, պապ, Abbas, abbé, bée, Արքա—վանապետ, վանաց Հայր և Հայրապետ, տռաջնորդ վանաց: Արքաս. յ, ու—մեծաւոր: Արքանա—բազանիք, լուացման տեղիք: Արքանայ—delubrum, idolorum templum, ~ forum: Արզմսեհ—ծառայ Քրիստոսի...»:

Բառարանիս մեջ բոլոր Հայերեն բառերի դիմաց միշտ չէ նշանակված լատիներենը. բազմաթիվ բառեր առանց թարգմանության: Լատիներեն բաժնի մի մասն այլ գրչով, ավելի հետո: Լուսանցքների մեջ բազմաթիվ հավելումներ, այլ գրչով:

Բառարանս հետաքրքրական է բազմաթիվ գավառական բառերի պաշարի տեսակետից. «Աղցաման—ապարանջան: Արծուց—ծովի գործի կամ ցանց: Թեփուր—ռառնա...» (Ղարաբաղի բարբառով՝ «տեփուր»): Վերջը՝ 431ա «Իւէխան ինֆեան—իւրեան յատուկ, sui ipsus: Իֆլին—իֆիլին, իֆլիչ և խօնցու, Arthritis asthriularis morbus, ~laguta»:

Այս և հետեւյալ հատորների մեջ բազմաթիվ թուրքերեն, պարսկերեն, երրայերեն բառեր, հատուկ անուններ:

2. Հատոր երեսուրդ. 2ր «Լաբան—Laban: Լաբոս. բոսի—մի եղջերու, որ թարգմանի օձահալան: Լազեմ. եցի, դել, ազցեմ—labeitro, Լազեմի. աղցի: կամ աքուց, աքացի—saleis ictus: Լազուցանիմ. զուցի, զցեալ—արտար թաղուցանիմ, պահպիմ...»: Վերջը՝ 532ա «Շաղիեմ—ad. շաղափ, terbro perfoto: Համարայ—մոնէպպէ, զարթոցիչ. Exutatorum horologium: Համանդաղ աչաց—Albugo in oculo, cataractam in oculo»:

3. Համոր երրորդ. 1ր «Շամբշեալ. շելոյ—լիմարհալ, Lymphatius, Lympatus; Շամբշիմ. շեցի, շեալ—լիմարացուցանեմ, ad insaniam adigo, demento; Շամբուշ—անմիտ կամ անվարժ, absurdus կամ տգէտ, խէվ, անմտացեալ, լեռնական, վայրի... Պառակ. ռակի—կողմն, անապատ, կովերու, եզներու տեղ ... Հարան ... Քոռանցի. ցնի—ազատ մարդ... Քուրի քուրի—ուրոյն ուրոյն ... Զույ—կուժ, սափոր...»: Վերջը՝ 448ա «Օրօնց կամ օրոց—canabula, orum, cano... Օցումն—Catta: Օցում—Catta»: Եվ ստորի մտական՝ „Finis”:

449ա «Եւ—Ել, Եւ ֆանզի...»:

450ա—452ա Հայկելիված բառեր, թվով 12: Վերջ՝ «Փիւտարար—inventore; Փիւտագիւտ—parabillis qui faciebat camparati polit etc. ...», որով և վերջանում է մտայանս:

Հայ լեզվագիտության և բառարանների աշխատասիրող եվրոպացի գիտնականների մասին հմմտ. Օքսֆորդի Բողլիյան գրատան Հայերեն ձեռագրերի ցուցակ № 63, Հ. Գարրհանալյան, «Աւագամման ամերիկական հայ լեզուի և մատենագրութեան լԱրեմտառ», Վենետիկ, 1895, էջ 21—35 (G. A. Schrumpf, „Les études arméniennes en Europe“) Կ. Կոստանյան, Հայագիտութիւնն Արևմտեան եւրոպայում, Թիֆլիս, 1910, էջ իլլ.-Ծ:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

1. Խա (Ա. Համոր) Հայագիւ F. Nève-ի գրչությամբ. „Vente Van Alstein, 26 fr. 40 [c.] les 3 volumes №№ 21882—21884”.

2. Խա (Ա. Համոր) ԱԱ գրիչ, ԺԹ կ., վարժ, բայց սիալ տղղագրությամբ. „Le présent dictionnaire a été trouvé chez un bokini[s]te de la Rue St. Severin et St. Jacque. Thonderterthroukh, arménien de Erzeroum”.

Ո՞ւր է գրված այս հիշատակարանը—Գա՞ն, թէ կիեծ, ուր կան վերը հիշատակված փողոցները*: Նույն նկատողությունը ան' «Catalogue des livres et manuscrits formant la Bibliothèque de feu Mr. P. Léopold Van Alstein, professeur agrégé à l'Université de Gand...». Gand, 1863, Imprimerie et litographie de C. Annoot—Braeckman, Tom I, p. 153, § a № 2102, ուր ձեռագրի մտախն որված է հանդիպությունը. „Mss. tout arménien avec des notes et la traduction latine de quelques mots d'une seconde main (Note écrite sur la feuille de garde). Le présent dictionnaire a été trouvé chez un bokiniste de la Rue St. Severin, St. Jacque. Thonderterthroukh, arménien de Erzeroum”.

* Համու «Ասուհանդակ» օրաթերթի (կ. Չուփս, 1900, № 317), ուր Հայուսակացույթին կա այս է № 1 ձեռագրի մասին, նշված փողոցները զանութեալ են Մարգարետ:

Նույն աճուրդի ժամանակ, ի միջի այլոց, վաճառվել են 53 անուն հայերեն գրքեր (տե՛ս «Catalogue...», Tome I-II, №№ 186—189, 515, 555, 2101, 2103—2128, 3358, 3538, 3886, 4379, 4547—4548, 4551—4559, 7037, 7039—7040, 7044, 7048) և հետեւյալ ձեռագիրը.

„№ 2129. Manuscrit arménien: Recueil de discours des pères, d'histoires des saints, etc. en tout 44 discours ou instructions, 4° à deux colonnes, veau ancien. Manuscrit très lisible, copié à Constantinople par le prêtre Paul, l'an 1118 de l'ère arménienne, c'est-à-dire l'an 1669.“ (Թարգմ. «№ 2129. Հայերեն ձեռագիր. Ժողովածու [եկեղեցական] հայրերի ճառերի, սրբերի վարքերի են., ընդամենը 44 ճառեր կամ խրատներ: Քառածալ, երկսյուն, կաշեպատ (հին հորթենի): Դյուրընթեռնելի ձեռագիր, ընդօրինակված Կ. Պոլսում Պողոս քահանայի ձեռքով Հայոց 1118 թվականին, այսինքն՝ 1669 թ.»):